«ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И СПОРТА АРМЕНИИ» ФОНД

«ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE AND SPORT» FOUNDATION

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

374 10 553310 info@sportedu.am www.sportedu.am Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0070, Ա. Մանուկյան 11

Республика Армения, 0070, Ереван, А.Манукяна 11; Armenia, 0070, Yerevan Alek Manukyan St.11

ՀՊ/656 - 2024 08.07.2024թ.

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐ ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գևորգյան,

Ի պատասխան 2024 թվականի հունիսի 14-ի թիվ 22/08"1"6-762 գրության, Ձեզ ենք ուղարկում Նաիրա Սամվելի Հարությունյանի «Երիտասարդների նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցությունն ինքնագնահատականի վրա», ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության առաջատար կազմակերպության կարծիքը:

Առդիր՝ 4 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Կատարող՝
Ա.Ա. Լալայանի անվ. Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ
Վարդան Գեղամյան
Հեռ. 010 55 33 10 155

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ

ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ Ժ/Պ՝

_____ Տ. Գ. ՍԻՄՈՆՅԱՆ

«04» «Հուլիսի» 2024թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Նաիրա Սամվելի Հարությունյանի «Երիտասարդների նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցությունն ինքնագնահատականի վրա», ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության"

Ամեն մի դարաշրջան ունի իր մարտահրավերները: 21-րդ դարի երիտասարդների սոցիալ-հոգեբանական խնդիրների ուսումնասիրությունները թույլ են տալիս տեսնել տվյալ ժամանակաշրջանի սոցիալական, հոգեբանական, արժեքային և այլ բաղադրիչների տեղաշարժեր:

Ն. Հարությունյանի հետազոտությունը նվիրված է ժամանակակից երիտասարդների նպատակային դիրքորոշումների առանձնահատկություններին, տեսակներին, դրսևորումներին, ինչպես նաև, սոցիալական ապրումների ձևավորման և դրսևորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին:

Թեմայի արդիականությունը ակնհայտ է, քանզի երիտասարդների նպատակադրման և դրանց համապատասխան սպասումների խնդիրը գրավում է հետազոտողների ուշադրությունը:

Ատենախոսը քաջատեղյակ լինելով հիմնախնդրի ուսումնասիրության տարբեր կողմերին, հիմնվել է հոգեբանության բնագավառում հայրենական, ռուսական և միջազգային տեսությունների գաղափարների վրա /Ջ. Լանգե, Դ. Ուզնաձե, Մ. Ռոկիչ, Է. Ֆեստինգեր, Դ. Լեոնտև, Ա. Շմելյով, Հ. Շայն, Դ. Կեմպբելլ և ուրիշներ/ հետազոտական ճանապարհով բացահայտել է այն բաղադրիչները, որոնք երիտասարդների մոտ հանդես են գալիս որպես նպատակային դիրքորոշումներ իրենց կենսագործունեության ընթացքում, բացահայտվել է հաջողության հասնելու և անհաջողությունից խուսափման մոտիվացիա ունեցող երիտասարդների ինքնագնահատականի վրա նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցության առանձնահատկությունները և այլ օրինաչափություններ,

որոնք կարող են հարստացնել ընդհանուր և սոցիալական հոգեբանության տեսական և գործնական հիմնահարցերի գիտական մեկնաբանման զինանոցը:

Ն. Հարությունյանի ատենախոսության նյութը հնարավորություն է տալիս գործնական հետազոտության հիման վրա վերանայել հոգեբանության որոշ դրույթներ՝ կապված նպատակային դիրքորոշումների, սոցիալական սպասումների, ռեֆլեքսիվության և ինքնագնահատականի հետ:

Ն. Հարությունյանի աշխատանքը ամբողջական է: Պահպանված է շարադրանքի ընդհանուր տրամաբանությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, ներկայացված են 6 եզրակացություն, օգտագործված է հարուստ գրականության ցանկ /ընդհանուր 186 աղբյուր/ և հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 175 համակարգչային էջ, ընդգրկում է 2 աղյուսակ, 16 նկար:

Ներածության մեջ ատենախոսը հստակ ներկայացնում է աշխատանքում քննարկվող տեսական վարկածը, ձևակերպում է հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդները, նորույթը, տեսական և գործնական նշանակությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակը բազմակողմանի և համակարգված վերլուծել է նպատակային դիրքորոշումների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, մակարդակը, տեսակները, դրսևորման բաղադրիչները, հարցի հետ առնչվող տեսական հիմնավորումները, որպես հետազոտության տեսամեթոդական հիմք ներկայացրել է սոցիալական սպասումների եռամակարդակ մոդելը:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը բազմակողմանի վերլուծության միջոցով բացահայտել է երիտասարդության շրջանում նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ձևավորման և դրսևորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Հստակորեն ուսումնասիրել է երիտասարդությունը՝ որպես սոցիալ- հոգեբանական տարիք, երիտասարդության տարիքում ինքնագնահատականի առանձնահատկությունները /ՈՒ. Ջեյմս, Վ. Ստոլին, Ի. Կրոն, Ա. Զախարովա, Ե. Վելս, Գ. Մալթվել և ուրիշներ/: Հեղինակը պարզաբանում է, որ ադեկվատ ինքնագնահատականով երիտասարդները ճիշտ են համադրում սեփական հնարավորություններն ու կարողությունները, բավական քննադատորեն են վերաբերվում իրենց, ձգտում են իրատեսորեն նայել անհաջողություններին և հաջողություններին, ձգտում են դնել հասանելի նպատակներ, որոնք կարելի է իրագործել գործնականում:

Հիմնվելով գրականությունում տարբեր մոտեցումների և նաև հեղինակի կողմից իրականացված հետազոտությունների վրա ատենախոսը գաղափար է առաջ բերում, որ հենց երիտասարդության տարիքում է բնորոշ ամենաբարձր ինքնագանահատականը ու առավել բարենպաստ ինքնավերաբերմունքը, քանի որ հենց այս տարիքում է անձը մաքսիմալ իրացնում իր ռեսուրսները, ներուժը, դնում

նպատակներ և հասնում դրանց: Աշխատանքի տեսական վերլուծությունների ամփոփումները խոսում են այն մասին, որ հեղինակը ամբողջովին տիրապետում է քննարկվող նյութի բոլոր մանրամասները, ունի իր ուրույն և ինքնուրույն մոտեցումները, դատողությունները, մեկնաբանությունները:

Աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է փորձարարական հետազոտություններին: Հեղինակը օգտագործել է հոգեբանական հետազոտությունների մեծ զինանոցը: Հստակ հիմնավորվել է ընտրած մեթոդների և մեթոդիկաների ընտրության սկզբունքները և հանրահայտ թեստային ողջ մարտկոցը, արդյունքների վերլուծությունը իրականացրել է միասնական կապի մեջ, ողջ հետազոտության տարբեր մակարդակներում: Հետազոտության այս գլուխը հարուստ է քննարկումներով և եզրակացություններով: Հիմնավորված տվյալներից բխող արդյունքները ու եզրակացությունները համապատասխանում են առաջադրված խնդիրներին: Հետազոտության բոլոր փուլերում հեղինակը ներկայացրել է հոգեբանության, սոցիոլոգիայի, ֆիզիոլոգիայի և այլ բնագավառների ժամանակակից պահանջներին համապատասխան գիտական բազմակողմանի հիմնավորումներ:

Աշխատանքը բավավականաչափ ինքնատիպ է և կարող է ներկայացնել մեծ կիրառական նշանակություն:

Եզրակացությունները համապատասխանում են խնդիրներին և արդյունքներին: Սեղմագիրը համառոտ ներկայացնում է ատենախոսության հիմնական բովանդակությունը, նրա հիմնական դրույթները, որոնք նաև ներկայացված են 11 հրատարակված գիտական հրապարակումներում:

Չնայած աշխատանքի բարձր գնահատականի և որակի, այնուամենայնիվ կա որոշ վրիպումներ և բացթողումներ, որոնց հաշվառման դեպքում աշխատանքը անհամեմատ կշահեր, մասնավորապես՝

1. Ատենախոսության թեման արդիական է և ուսումնասիրությունները անցկացվել են ՀՀ տարածքում բնակվող երտասարդների միջև, աշխատանքը շատ ավելի կշահեր, եթե նշվեր /Հայաստանաբնակ երիտասարդների/, քանզի ուսումնասիրությունների համար այդ հանգամանքը, կարող էր հանդես գալ, որպես կարևոր պարագա:
2. Հեղինակը ուսումնասիրելով ընդունված տարբեր տարիքային պարբերացումները, իր հետազոտության համար ընտրել է Վ. Կվինի կողմից մշակված տարիքային պարբերացումը, որտեղ երիտասարդության փուլը համարվում է 18-35տ., սակայն հետազոտությունն անցկացված է Հայաստանում, հայ երիտասարդների շրջանում, որտեղ երիտասարդության տարիքը օրենքով սահմանված է 16-30 տարեկան:
3. Ատենախոսը մանրակրկիտ ուսումնասիրել է երիտասարդների նպատակային դիրքորոշումները, սոցիալական սպասումները, հաջողության մոտիվացիան, երիտասարդների ինքնագնահատականը, ռեֆլեքսիվությունը, սակայն չի

դիտարկում երիտասարդի արժեքային համակարգը, որը սերտորեն կապված է այս բոլոր օղակների հետ:

4. Ատենախոսը կատարել է գրականության հարուստ վերլուծություններ, սակայն սակավ են հայրենական հեղինակների հայեցակարգերը:
5. Եզրակացությունները շարադրված են երկար, տեքստային են, նման են տեսական վերլուծությունների:

Նշված անճշտությունները բոլորովին չեն նսեմացնում գիտական աշխատանքի արժեքը, որը կատարված է գիտական բարձր մակարդակով, ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն: Ատենախոսությունը ունի ինքնուրույն, ավարտուն տեսք, ակնհայտ է, որ այն կարող է մեծ ներդրում ունենալ հոգեբանական ծառայության կազմակերպման աշխատանքներում:

Եզրակացություն

Նաիրա Սամվելի Հարությունյանի «Երիտասարդների նպատակային դիրքորոշումների և սոցիալական սպասումների ազդեցությունն ինքնագնահատականի վրա», թեմայով «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ ԺԹ.00.03 հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսությունը ամբողջությամբ բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ Ն" Հարությունյանը արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել է Ա. Լալայանի անվան Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 25.06.2024թ նիստում (արձանագրություն թիվ 12), որին մասնակցել են ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., դոցենտ Վ.Ղ. Գեղամյանը, ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա. Չատինյանը, հ.գ.թ. դոցենտ Ա.Գ. Ստեփանյանը, հ.գ.թ., հ.գ.թ., դոցենտ Ն.Է.Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ՝ Ա.Ս.Դավթյանը, դոցենտ Թ.Շ. Սոֆյանը, ասիստենտներ Ս.Ս. Արզաքանյանը, Ա.Մ. Գաբրիելյանը, գործավար՝ Ա.Ա. Գյորգյանը:

ՀՖԿՍՊԻ –ի Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., դոցենտ **Վ. Ղ. Գեղամյան**

Հաստատում եմ՝ հ.գ.թ., դոցենտ Վ.Ղ. Գեղամյանի ստորագրությունը

ՀՖԿՍՊԻ –ի գիտական քարտուղար՝ Մ.գ.դ., պրոֆեսոր **Ա. Ա. Չատինյան**

«04» «Հուլիսի» 2024թ.